Ադրբեջանը դժվարությունների շեմին է

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 11.02.2024թ.

Ինչպես հաղորդում է *EADaily*-ն՝ վկայակոչելով ադրբեջանական աղբյուրները, *«Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամի եկամուտները գահավիժել են»:*

2024 թ. հունվարին *SOFAZ-ի* եկամուտները ադրբեջանական խոշորագույն նավթահանքերից՝ Ազերի–Չիրագ–Գյունեշլիից (ԱՉԳ) կազմել են $387.645.000, մինչդեռ անցյալ տարվա հունվարի վերջին ԱՉԳ-ից ստացված եկամուտները $625 մլն-ի էին հասել: Տարբերությունն ավելի քան ակնհայտ է:

Միջազգային փորձագետների կարծիքով, բոլոր հանքավայրերում արդյունահանման ծավալների առավելագույն կետը և նոր ցուցանիշները հստակ ցույց են տալիս, որ ամեն տարի ԱՉԳ-ից արտամղվող նավթի ծավալներն արագորեն նվազում են: Եթե 2022 թ. այդ ծավալը կազմում էր 32,7 մլն տ, ապա 2023 թ. արդյունահանումը նվազել է մինչև 30,2 մլն տ: ԱդրՀ էներգետիկայի նախարարության կանխատեսումների համաձայն՝ 2024 թ. այդ ցուցանիշը կնվազի մինչև 29,5 մլն տ, 2025 թ.՝ մինչև 28,3 մլն տ, 2026 թ.՝ մինչև 27,5 մլն տ, իսկ 2027 թ ՝ մինչև 26,9 մլն տ նավթ:

Նշված փաստացի և կանխատեսվող ցուցանիշները վկայում են Ադրբեջանում նավթի արդյունահանման կայուն անկման մասին, ինչն անխուսափելիորեն կազդի Ադրբեջանի նավթային հիմնադրամի եկամուտների, հետևաբար, նաև պետբյուջեի և երկրի տնտեսության մուտքերի վրա: Դեռևս 1994 թ. Հեյդար Ալիևի կողմից միջազգային էներգետիկ խոշոր ձեռնարկությունների հետ կնքված, այսպես կոչված, «Դարի պայմանագրի» կատարման արշալույսին, ադրբեջանցի քաղաքական գործիչներն ու փորձագիտական շրջանակները հասարակությանը համոզեցին, որ նավթի և գազի հանքավայրերի զարգացումը թույլ կտա Ադրբեջանին՝ ի լրումն հզոր տնտեսություն կառուցելու, նավթային ֆոնդը վերածել պետության համար հուսալի ֆինանսական «անվտանգության բարձիկի», որն իր ակտիվներով համեմատելի է 1990 թ. ստեղծված Նորվեգիայի նավթային հիմնադրամի (Նորվեգիայի պետական կենսաթոշակային հիմնադրամի) հետ: Սակայն մինչ օրս նորվեգական հիմնադրամն արդեն կուտակել է $1 տրիլիոնի կապիտալ, մինչդեռ ադրբեջանական *SOFAZ*-ը կարողացել է հավաքել ընդամենը $40-50 մլրդ: Նորվեգիայի բյուջեն գործնականում կապված չէ Նավթային հիմնադրամի հետ, և երկրի տնտեսությունը դինամիկ աճում է ինքնավար ռեժիմով՝ առանց Հիմնադրամից վարկ վերցնելու (բացառությամբ «Քովիդ»-ի

ժամանակաշրջանի), մինչդեռ Ադրբեջանի տնտեսությունը և սոցիալական ոլորտը մշտապես «սայթաքում են», և հնարավոր չէ դրանք «ջրի երեսին» պահել՝ առանց *SOFAZ*-ից նավթային եկամուտների համակարգված մղման:

Անարդյունավետ տնտեսական կառավարումը, պետական համակարգում համատարած կոռուպցիան և կառավարման ավտորիտար-կլանային մոդելը նպաստեցին պետական բյուջեով Ադրբեջանի նավթային եկամուտների պարբերական, չարդարացված վատնման պրակտիկայի ձևավորմանը: Այդպիսով, երկրի իշխանությունները բաց թողեցին նավթային հարստության «Ոսկե դարաշրջանը» և չկարողացան ազատել ԱդրՀ-ն «նավթային ասեղից» և կառուցել արդյունավետ տնտեսություն, որն ուղղակիորեն կախված չէր լինի ածխաջրածինների արտահանումից, դրանց ծավալներից և միջազգային գներից:

Միևնույն ժամանակ, Ալիևը քաջատեղյակ է առաջիկայում երկրի տնտեսությանը և, հետևաբար, իր վարչակարգի ապագային սպառնացող վտանգներին, ինչի մասին են վկայում վերջին երկու-երեք տարվա ընթացքում գրեթե զրոյական տնտեսական աճի ցուցանիշները: Կարելի է ենթադրել, որ հենց դրա հետ է կապված Ալիևի վարչակարգի շտապողականությունը՝ երկրի տնտեսությունը հանածոների հատվածից լոգիստիկ և տարանցիկ ուղղության վերափոխելու, ինչպես նաև Ղարաբաղյան հիմնախնդրի արագ ուժային լուծման և նախագահական ընտրությունների պարտադրման հարցում:

Թերևս Ի. Ալիևը իր և իր երկրի համար դժվար ժամանակների է պատրաստվում, սակայն թաքցնում է գալիքը ադրբեջանական հասարակությունից: